



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

___ դեկտեմբերի 2020 թվականի № ___ Ա
քաղ. Երևան

**«ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի նոյեմբերի 20-ի №429Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետի համաձայն՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ոչ բազմաբնակարան շենքերի և տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը պետք է դուրս բերի սահմանազատման կետեր, իսկ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը պետք է կնքեր հոլզգրաֆիկ կնիքներով, հաշվառման հանգույցներում պետք է ուղղեր հակառակ տեղադրված ֆիլտրերը և եռակցեր կամ անհնարինության դեպքում կնքեր ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը,

բ) Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի օգոստոսի 18-ի №516-Ն հրամանի համաձայն՝ Ընկերության կողմից 2020 թվականի օգոստոսի 7-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) հայտի ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովի, ջրային կոմիտեի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել է Ծառայությունների մատուցման 2021 թվականի սակագների հաշվարկներում ներառվող փաստացի մանրաձախ ջրամատակարարման ծավալների մոնիթորինգ (այսուհետ՝ Մոնիթորինգ),

գ) Մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են Հանձնաժողովի, ջրային կոմիտեի և Ընկերության միջև 2020 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրված արձանագրությամբ, համաձայն որի՝ Մոնիթորինգի ընթացքում հայտնաբերվել են նաև հոլոգրաֆիկ կնիքով չկնքված 42 ջրաչափ և հակառակ տեղադրված ֆիլտրերի 8 դեպք,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորությունների չկատարման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2020 թվականի նոյեմբերի 4-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի նոյեմբերի 4-ի №ԳԲ/34.3-ՄՇ-6/4494-2020 գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 13-ի №ՄՇ/24736 և 2020 թվականի նոյեմբերի 25-ի №ՄՇ/25601 գրություններով խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը և Որոշման 2-րդ կետով նախատեսված պարտավորությունների կատարման համար սահմանել նոր ժամկետ՝ տեղեկացնելով, որ նշված պարտավորությունների բավարար մակարդակով և ամբողջ ծավալով չիրականացնելը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կորոնավիրուսի (COVID-19) համաճարակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի №1586-Ն որոշումներով հայտարարված համապատասխանաբար՝ արտակարգ և ռազմական դրությունների արդյունքում ստեղծված ֆորսմաժորային իրավիճակով: Մասնավորապես, Ընկերությունը նշել է, որ Որոշման 2-րդ կետով սահմանված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է մեծաթիվ մարդկային ռեսուրս, մինչդեռ քննարկվող ժամանակահատվածում Ընկերության 170 աշխատակից հիվանդացել է կորոնասիրուսային (COVID-19) հիվանդությամբ, իսկ 154 աշխատակից՝ գտնվել մեկուսացման մեջ՝ խոչընդոտելով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը: Բացի այդ, Որոշման 2-րդ կետի պահանջների ոչ բավարար չափով կատարման համար խոչընդոտ է հանդիսացել նաև այն, որ արտակարգ դրության պայմաններում ոչ բնակիչ-բաժանորդների գործունեությունը տարբեր ժամանակահատվածներում եղել է արգելափակված, իսկ հետագայում գործել են որոշակի սահմանափակումներով, ինչպես նաև տարբեր ժամանակահատվածներում պարետի որոշումներով որոշակի բացառությունների սահմանմամբ ժամանակավորապես արգելվել են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակները, այսինքն՝ ոչ բնակիչ-բաժանորդները հիմնականում գործունեություն չեն

ծավալել կամ հետագայում ծավալել են սահմանափակումներով: Միաժամանակ, պարետի որոշմամբ տարբեր ժամանակահատվածներում Ընկերության գործունեությունը նույնպես եղել է որոշակիորեն սահմանափակված, և Ընկերությունն իր գործունեությունն իրականացրել է անհրաժեշտ նվազագույն անձնակազմով՝ միայն անհետաձգելի և վթարային աշխատանքներ իրականացնելու նպատակով: Ուստի, հետևելով պարետի որոշումներով սահմանված պարտադիր կանոններին, ինչպես նաև բնակչության առողջության պահպանության և անվտանգության տեսանկյունից փորձ է կատարվել հնարավորինս նվազագույնի հասցնել Ընկերության աշխատակիցների և բաժանորդների միջև շփումները: Կորոնավիրուսային համավարակից գատ, Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի կատարումն ապահովելու համար խոչընդոտ է հանդիսացել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի №1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությունը, հատկապես, երբ հայտարարված գորահավաքային գորակոչին ներգրավվել կամ մարտական գործողությունների մասնակցության համար կամավորագրվել են Ընկերության ներկայացուցիչներ: Արդյունքում, ստեղծված իրավիճակն, Ընկերության կամքից անկախ պատճառներով, ուղղակիորեն իր ազդեցությունն է ունեցել Որոշման 2-րդ կետով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով և ժամանակին կատարման վրա, թեև Ընկերությունը գործադրել է բավարար ջանքեր,

զ) ստեղծված ֆորսմաժորային իրավիճակի մասին Ընկերությունը տեղեկացրել է նաև իր 2020 թվականի մարտի 18-ի №ՄՇ/5762, 2020 թվականի ապրիլի 7-ի №ՄՇ/6440, 2020 թվականի ապրիլի 16-ի №ՄՇ/6581, 2020 թվականի հոկտեմբերի 6-ի №ՄՇ/21311 գրություններով,

է) Ընկերությանը տրամադրված Ծառայությունների մատուցման ԼՁՆ°0001 լիցենզիայի (այսուհետ՝ ԼՁՆ°0001 լիցենզիա) պայմանների 1-ին կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ ֆորս մաժոր է արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Ընկերության կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջինիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: ԼՁՆ°0001 լիցենզիայի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են բնական և տեխնաժին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ

անգործությունը: Նշվածը չի սահմանափակում Ընկերության իրավունքը այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար,

ը) ԼՁN°0001 լիցենզիայի պայմանների 22-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել լիցենզիայի պայմանների խախտման,

թ) ԼՁN°0001 լիցենզիայի պայմանների 32-րդ կետի համաձայն՝ Ընկերության նկատմամբ տուժանք չի կիրառվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորի հետևանք են,

ժ) հարուցված վարչական վարույթի ընթացքում փաստվել է, որ թեև Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը, սակայն ներկայացված պարզաբանումները վկայում են, որ նշված պարտավորությունների կատարումը խոչընդոտող գործողությունները ֆորս մաժոր են, դրանց կատարման անհնարինությանը հանգեցնող հանգամանքները գտնվել են Ընկերության վերահսկողությունից դուրս, և վերջինս գործադրել է բոլոր անհրաժեշտ միջոցները դրանց լուծման համար,

և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Հանձնաժողովի կողմից 2020 թվականի նոյեմբերի 4-ից Ընկերության նկատմամբ Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջների չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Սահմանել, որ Ընկերությունը պարտավոր է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը՝
 - 1) ոչ բազմաբնակարան շենքերի և, տեխնիկական հնարավորության դեպքում նաև բազմաբնակարան շենքերի, ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը դուրս բերել սահմանազատման կետեր.
 - 2) բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը կնքել հոլոգրաֆիկ կնիքներով.
 - 3) բոլոր ոչ բնակիչ-բաժանորդների հաշվառման հանգույցներում ուղղել հակառակ տեղադրված ֆիլտրերը.
 - 4) եռակցել կամ անհնարինության դեպքում կնքել ջրամատակարարման ցանցում ոչ պատշաճ ձևով խցափակված գծերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրագրվելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
— դեկտեմբերի 2020թ.